

## ԿԳ նախարարն ու COAF հիմնադիրը հուշագիր ստորագրեցին

Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) ավելի քան տասնամյա գործունեությունը հունիսի 12-ին ամրագրվեց պետական մակարդակով: ՀՀ կրթության և գիտության (ԿԳ) նախարար Լևոն Մկրտչյանը և Հայաստանի մանուկներ հիմնադրամի խորհրդի ատենապետ Գարո Արմենը համագործակցության հուշագիր ստորագրեցին:

Հուշագրի շրջանակում նախատեսվում է մեկտեղել ջանքերը Հիմնադրամի ծրագրային առանցքային ուղղություններով՝ դպրոցական ենթակառուցվածքների բարելավում, տեխնոլոգիապետ հագեցած դասասենյակների՝ ստեղծագործարանների կամ ՄՄԱԸՍ սենյակների ստեղծում, դպրոցական ճաշարանների վերանորոգում, արտադասարանային խմբակների ակտիվացում ու խրախուսում և այլն: Շեշտ է դրվում նաև աշակերտական ինքնավարությանն ու մասնագիտական կողմնորոշմանն ուղղված նախաձեռնությունների վրա:



*«Հայաստանի մանուկներ հիմնադրամը մեր երեխաների կյանքի բոլոր ոլորտներում է, մանկությունից մինչև գիտություն ուղեկցում է նրանց: Նրանք մեր կրթական մակարդակը տանում են միջազգային ճանաչման: Սա մտադրությունների հուշագիր է»,-* նշեց նախարար Լևոն Մկրտչյանը:

Հիմնադրամի կողմից Լոռու մարզի Դեբետ համայնքում կառուցվող ՄՄԱԸՍ կենտրոնում նախատեսվում է համատեղ միջոցառումների իրականացում, ուսուցիչների վերապատրաստում, որը, ըստ նախարարի, իր խնդրանքն է հիմնադրամին:

ԿԳ նախարարությունը պատրաստակամություն է հայտնում օժանդակել հիմնադրամին շահառու դպրոցների ընտրության հարցում, խրախուսել վերջիններիս ակտիվորեն ներգրավվելու իրականացվող նախաձեռնություններում, նպաստել շահառու դպրոցների ներգրավմանը նախարարության կողմից իրականացվող պետական այն ծրագրերում, որտեղ համատեղ ջանքերը կարող են հանգեցնել ֆինանսական և ծրագրային արդյունավետության (օրինակ՝ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիր և այլն):



*«Մեր նպատակն է կրթական մակարդակը շատ բարձրացնել, այնքան, որ մենք՝ հայերս, աշխարհում լինենք առաջատարներից մեկը այդ ոլորտում: Վստահ եմ, որ մեր երեխաները, մեր մանկավարժները կանեն ամեն ինչ, որպեսզի իրականություն դարձնենք մեր նպատակները»,- նշեց Հայաստանի մանուկներ հիմնադրամի ատենապետ Գարո Արմենը:*

Նախարարությունն ու հիմնադրամը շարունակելու են մշակել և հանրայնացնել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը խթանող ուսումնասօժանդակ նյութեր և մեթոդական ձեռնարկներ՝ մասնագիտական կողմնորոշման, սոցիալ-ֆինանսական կրթության, մասնագիտական աջակցության և այլ ոլորտներում:

Դպրոցների կառավարման և ուսումնական բովանդակության բարելավումը մեկ այլ կարևոր դրույթ էն, որոնց ուղղությամբ աշխատելու են երկու կողմերը՝ հասանելի դարձնելով Հայաստանում և արտերկրում հասանելի առաջատար փորձը:

Հայաստանի մանուկներ հիմնադրամը պարզևստրեց նաև Արմավիրի մարզի այն դպրոցներին, որոնք ավելի քան տասը տարի սերտորեն համագործակցել են հիմնադրամի հետ ու շահառու մի ամբողջ սերունդ տվել:

Երեխայակենտրոն կրթական միջավայրի ձևավորման և համատեղ ծրագրերի արդյունավետ իրականացման համար պարզևատրված Քարակերտի թիվ 1 դպրոցի տնօրեն Թամարա Բաղդասարյանը Հիմնադրամի հետ համագործակցությունը որակեց բեկունային. «*Դպրոցի վերանորոգումից մինչև երեխային բուհ ուղղորդելը COAF-ը վերցնում է իր ուսերին՝ փոխելով ոչ միայն դպրոցի, այլև համայնքի կյանքը*»: